Ս. Մարշակ

# ՀԻՄԱՐ ՄԿՆԻԿԸ









Նկարները՝ Վ. Լեբեդևի

ՊԵՏՀՐԱՏ 1935 ԵՐԵՎԱՆ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА

891.71 Մ
Մ-37

Խմբագիր՝ Ե. Չոփուրյան
Տեխ. խմբ.՝ Ս. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանցյան

60349-68
891.71Մ
Մ-37

Գլավլիտ № 272, պատվեր № 1046
Հրատարակչ. № 3431, տիրաժ 5000
Պետհրատի տպարան, Յերևան, II Գնունի 4

297
891.71Մ
Մ-37



БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

— Քնիր, մանկիկ իմ սիրուն, —
Մուկն էր յերգում իր բնում, —
Կտամ քեզ մոմ, չորուկ հաց,
Քնիր, բալիկ իմ սիրած։

Պատասխանեց մկնիկը.
— Բարակ է քո ձայնիկը։
Գնա, մայրիկ, մի հարմար
Դայակ ճարիր ինձ համար։

4133
26 JUN 2013





Մայր մկնիկը շուտ վազեց
Բադիկ տատին աղաչեց.
—Բադիկ տատի, շուտ արի,
Մեր Բուլիկին օրորի:

—Քնի՛ր, քնի՛ր, իմ անգին,—
Յերգեց բադը սրտագին,—

Յես են այգուց մի յերկար
Վորդ կբերեմ քեզ համար:

Հիմար փոքրիկ մկնիկը
Բարձրացրեց գլխիկը,
Պատասխանեց կիսարթուն.
—Շատ բարձր ես դու յերգում:

Մայր մկնիկը շուտ վազեց,
Կռռան գորտին աղաչեց.
—Գորտիկ, գորտիկ, շուտ արի,
Մեր Բուլիկին օրորի:

—Կը՛ռ, կը՛ռ, մկնիկ անման,—
Յերգեց գորտը կռկռան,—

Լաց մի լինի, իմ հոգյակ,
Յես քեզ կտամ մի մոծակ:

Հիմար փոքրիկ մկնիկը
Բարձրացրեց գլխիկը,
Պատասխանեց կիսարթուն.
—Շատ տխուր ես դու յերգում:

ԶԱՍՌ-Ард ССР
ИМ. А
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
60349-67



Մայր մկնիկը շուտ վազեց,
Գեր խոզուկին աղաչեց.
— Խոզո՛ւկ, խոզո՛ւկ, շուտ արի,
Մեր Բուլիկին օրորի:

— Խը՜ռ, խը՜ռ, քնիր աննման, —
Յերգեց խոզը խռխռան, —
Թե վոր դու լաց չլինես,
Մի մեծ գազար կտամ քեզ:

Հիմար փոքրիկ մկնիկը
Բարձրացրեց գլխիկը,
Պատասխանեց կիսարթուն.
— Շատ կոպիտ ես դու յերգում:



Մայր մկնիկը շուտ վազեց,
Նժույգ ձիուն աղաչեց.
— Ձի բարեկամ, շուտ արի,
Մեր Բուլիկին օրորի:

— Քնիր, սիրուն իմ մկնիկ, —
Յերգեց Նժույգն անուշիկ, —
Լաց մի լինի, իմ հոգյակ,
Գարի կտամ մի քսակ:

Հիմար փոքրիկ մկնիկը
Բարձրացրեց գլխիկը,
Պատասխանեց կիսարթուն.
— Սարսափելի յես յերգում:



Մայր մկնիկը շուտ վազեց
Գայլաձուկին աղաչեց.
— Ձկնիկ, ձկնիկ, շուտ արի,
Մեր Բուլիկին օրորի։

Ձուկը յերգել սկսեց,
Բայց վոչ մի ձայն չլսվեց,

Լայն բացել եր բերանը,
Դուրս չեր գալիս իր ձայնը։

Հիմար փոքրիկ մկնիկը
Բարձրացրեց գլխիկը,
Պատասխանեց կիսարթուն.
— Շատ ցածր ես դու յերգում։



Մայր մկնիկը շուտ վազեց.
Սև փիսիկին աղաչեց.
— Սևուկ փիսիկ, շուտ արի,
Մեր Բուլիկին օրորի։

— Միաու, միաու, իմ բալիկ, —
Յերգեց փիսոն անուշիկ, —
Միաու, պառկենք դու և յես,
Շատ եմ սիրում, ջանիկ, քեզ։

Հիմար փոքրիկ մկնիկը
Բարձրացրեց գլխիկը,
Պատասխանեց կիսարթուն.
— Ա՜խ, ինչ լավ ես դու յերգու



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Մին էլ վազեց մկնիկը,
Տեսնի՝ վոնց է բալիկը։
Նայեց այստեղ ու այնտեղ՝
Բալեն չկար վոչ մի տեղ։

Библиотека
ՀՍՍՌ

ՀՀ Ազգային գրադարան
NL0392275

Գինը 50 կոպ.

4133

ՓՈԽԱԴՐԵՑ՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

С. МАРШАК
„О ГЛУПОМ МЫШОНКЕ“
На армянском языке
ГИЗ ССР Армении, Эривань, 1935 г